

ՅՈՐԵԼԵԱՆՆԵՐ

ՆԵՐՍԵՆ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի
Հայ բանասիրության ֆակուլտետի՝
ակադ. Հրանդ Թամրազեանի անուան
Հայ գրականության պատմության
ամբիոնի հայցորդ

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻԻ ԱՆԹՈՒԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ (Ծննդեան 115-ամեակ)

Բանալի բառեր. Գուրգէն Մահարի, անդրադարձ, կեանք և գործունէութիւն, գրական ժառանգութիւն, յոբելեան:

Key words: Gurgen Mahari, reference, life and activity, literary heritage, anniversary.

Մահարի մեր գրականության նշանաւոր դէմքերէն մին է, ինքնատիպ և անկրկնելի անհատականութիւն մը: Եթէ չհաշտուինք դժբախտ ու աղէտաւոր հանգամանքներու բերումով հարկադրուած լռութեանը, պիտի արձանագրենք, որ անոր թէ՛ բանաստեղծութիւնը և թէ արձակը մշտապէս զբաղեցուցած են գրականության և քննադատության ուշադրութիւնը: Անոր գրական վաստակին շուրջ գրուած են ուսումնասիրութիւններ, հրապարակուել են մենագրութիւններ, յօդուածներ: Մեր նորագոյն գրականության պատմութիւնը շարադրող ոեւէ հեղինակ չէ շրջանցած անոր ստեղծագործութիւնը, այլապէս այդ պատմութիւնը խորապէս թերի պիտի ըլլար և վիրաւոր: Աւելին՝ առանց մահարիական վկայակոչումներու չէին կրնար իրենց ինքնաբաւ զգալ Չարենցի, Բակունցի, Թոթովենցի մասին մենագրութիւններու, սկզբունքային յօդուածներու հեղինակները: Մահարի այն եզակի գրողներէն է, որուն կեանքն ու գործը մշտապէս մնալու են հայ գրաքննության մտքի ծիրին մէջ, իբրեւ իր ապրած ժամանակներու բարձրարուեստ վկայագրութիւն:

2018-ի Օգոստոս 1-ին լրացաւ Գուրգէն Մահարիի ծննդեան 115-ամեակը: Մեր պատմության ամենէն բախտորոշ շրջաններէն մէկուն համապատասխանող իր կեանքի ընթացքին, գրողի ճակատագիրը յաճախ նոյնացած է ամբողջ իր ժողովուրդի ճակատագրին հետ. ան ճանչցած է գաղթի և սովի սարսափը, որբանոցային կեանքի գորշութիւնը, բաժնեկից եղած է հանրապետության և խորհրդայնացումի տարիներու յոյզին, ճաշակած մեր ժողովուրդին վերապահուած ուրախութիւններն ու դառնութիւնները:

Այս բոլորին արձագանքը կը գտնենք Մահարիի գրական ստեղծագործության մէջ: Բանաստեղծության, պոէմի, պատմուածքի, յուշի, վիպակի հարուստ բերք մը ունինք մեր առաջ, բազմասեռ, այլազան և միշտ իւրայատուկ:

Գ. Մահարիի ստեղծագործական կենսագրութիւնը կը սկսի 1917-ին, երբ Երեւանի «Աշխատանք» թերթին մէջ կը տպագրուի անոր առաջին բանաստեղծութիւնը՝ Գ. Արփուռի ստորագրութեամբ: Հայրենի տան և հարազատներու կարօտով ներշնչուած 15-ամեայ պատանիի մը վերջուշն է Մահարիի առաջին բանաստեղծութիւնը՝ «պա-

րուրուած մեծարենցեան անրջանքի շղարշով»։ Այնուհետեւ Մահարի կը շարունակէ տպագրուիլ Երեւանի և Թիֆլիսի մէջ հրատարակուող հանդէսներու և թերթերու մէջ։ Բայց ան տակաւին չունէր բանաստեղծական սեփական աշխարհ և ինքնուրոյն ձեռագիր։ Այդ շրջանի ոտանաւորները նախափորձերու տպաւորութիւն կը ձգեն ընթերցողին վրայ։

Հայ իրականութիւնը զուրկ էր կեանքի նկատմամբ հաւատ ներշնչելու կայծերէ։ Որբանոցային գորշ ու տարտամ միջավայրը և դառն ու դաժան տպաւորութիւնները պատանիին մէջ, տեղ կու տան յուսալքումի և կը նուազեցնեն ապրելու կիրքը։ Աշխարհը կ'երեւայ չար, կեանքը՝ ունայն, որուն հետեւանքով ալ բանաստեղծը կը խարխափէ «միսթիքական նախազգացումներու ու խորհրդաւոր այլաբանութեան, անառարկայ խորհրդածութիւններու ու մեռելոցի տրամադրութիւններու» ոլորտին մէջ¹։

Աշխարհէն խոցուած պատանիին համար կեանքը կը կորսնցնէ կենդանի հրապոյրը և կը դառնայ «Մեծ Ոչինչ»։

Այսպիսի տպաւորութիւն կը թողու 1918-ին «Վան-Տոսպ» հանդէսին մէջ Մահարիի հրատարակած «Հեթանոսական խոյանքներ» բանաստեղծութիւններու շարքը²։

«Մեծ Ոչինչ», «Մենութեան Արցունքներ», «Սարսափի Հովիտէն» գործերու մէջ բանաստեղծը իւրովի կը հիմնաւորէ իր հաւատքի կորուստին պատճառները։ Մարդոց հանդէպ մեծ ու վսեմ հաւատք ունէր լուսաւոր երազներով պատանին, բայց ահաւոր գիշեր մը շար մարդիկ մորթեցին անոր երազները. «...Աշունը իր մահու արցունքները թափեց», և կարապները լացին անոր հաւատքի դամբանին վրայ։ Շրջապատը վերածուեցաւ սեւ գերեզմանոցի, որուն հսկայ լուսութեան մէջ «բուերը իրենց վայրենի մահերգը երգեցին»։

Այս իրականութեան մէջ կը մեռնի բանաստեղծի հաւատն «առ Աստուած», և եկեղեցիներու աղօթք մրմնջացող զանգերն ու օրհներգութիւնները անոր կը թուին հեգնանք ու «ամբոխի ծնրադրումը՝ հսկայ խեղագարութիւն»։

Որբան մեծ է հաւատը, այնքան տառապագին կը հնչեն հաւատքի խորտակման շեշտերը։ Սառն ու անտարբեր հայացքներու տակ, բզկտուած ու մահամերձ երկրին մէջ, Մահարիի քնարական հերոսը զրկուած է հասարակական իտէալէն։ Ան կը թափէ մենութեան արցունքներ, մատնուած յուսալքութեան ու անորոշ կասկածի։ Երազներու «չքնաղ հովիտը» կը դառնայ «սարսափի հովիտ», ուր ժպիտը տակաւին չբացուած՝ կը մեռնին մանուկները, «արեան տարափին տակ» մահ կը բուրեն ծաղիկները և ամենուր կեցած է սեւաստուեր շարիքը։ Խամրած են կեանքի բազմերանգ գոյները, իսկ իրականութեան ճշմարիտ նկարագիրն ալ «անյուսութեան մռայլ վիհը ցոյց կու տան...» բանաստեղծին։ Մահարիի այս շրջանի գրական փորձերը մեծաւ մասամբ վերացական խոհեր են, արդիւնք՝ գրական չաղթահարուած ազդեցութիւններու։ Պէտք է ըսել սակայն, որ այդ փորձերու մէջ կը նկատուի որոնումներուն մէջ գտնուող ապագայ բանաստեղծը³։

Մահարիի վաղ շրջանի բանաստեղծութեան մոթիւններն են որբութենէն ու մենակութենէն ծնած տխրութիւնը, թախիծն ու մորմոքը, հայրենի երկրի և դաժանօրէն ընդհատուած մանկութեան կարօտը։ Բնական է, որ բանաստեղծական այդպիսի խառնուածք ունեցող պատանին ո՛չ միայն հոգեկան մեծ սնունդ պիտի գտնէր Տէրեանի պոեզիային մէջ, այլեւ անոր մէջ պիտի բորբոքէր «Տէրեանական խօսքեր կրկնելու մարմաշը»։ Ընդհանրապէս Մահարիի այդ շրջանի շատ գործերը ո՛չ միայն իրենց բանաստեղծական ապրումով, այլեւ արտայայտման ձեւերով՝ մեղեդիականութեամբ

¹ Աղաբաբեան Ս., Գ. Մահարի, Երեւան, 1959, էջ 10։

² «Վան-Տոսպ», № 10, 1918, Թիֆլիս։

³ Աղաբաբեան Կ. Բ., Գուրգէն Մահարի, Զանգակ հրատ., Երեւան, 2013, էջ 6։

ու բառամթերքով, կը յիշեցնեն Վահան Տէրեանը:

Յետագային Մահարի կը գրէ. «Իր տխրաշունչ ու թաւշ շնչով ինձ օրօրել էր Վահան Տէրեանը և անձրեւով ու մշուշով լցուել էի ես, որբանոցը, Երեւանը, աշխարհը. Տաղտկալի էր գորշ, մորմոք ու անդորրութիւն»⁴:

Մահարիի մօտ կը շարունակուի ինքնուրոյն ճամբայ գտնելու ներքին մաքառումը և ճիշդ այդ շրջանին, գրական գորշ իրադրութեան մէջ, «ռումբի նման» կը պայթի Եղիշէ Չարենցի անունը. «Սիւսանթոյի ահարկու տեսիլներով կը յուզուէի, Վարուժանը կը տանէր զիս մինչև հեթանոսականը, կը թափառէի Մեծարենցի «Ճամբաներուն վրայ», ինծի կը գրաւէր Թէքէեանի «Հանըմը» Կնուտ Համսունի «Պանը»: Երբ ես Չարենցը տեսայ, այլևս չկար ինծի համար ո՛չ Վերհարն, ո՛չ Պուշկին և ո՛չ ալ անոնցմէ ուժգինը...: Նոր էր այդ աշխարհը, իրերը, ռիթմը, պատկերները, միրգերը, ծաղիկները.

Հեռո՛ւ, մօտիկ ընկերներուն, աշխարհներուն, արեւներուն,

Հրաման հոգիներուն...

Նոր էր աշխարհը, առնական, խորին:

Ես Եղիշէ Չարենցով Յեղափոխութիւնը ընդունեցի այն ժամանակ: Լցուեցայ ես, որբանոցը, Երեւանը, ամբողջ աշխարհը՝

Շփոթ երգելով ու աղմուկներով»⁵:

Առաջին իսկ հանդիպումէն Չարենցի և Մահարիի միջեւ կը ստեղծուի, վերջինիս համար, կենսականօրէն անհրաժեշտ հոգեկան կապ մը: Այդ կապը կը դառնայ գրական ճակատագիր մը և կը շարունակուի մինչև այն եղբրական գիշերը, երբ ճամբաները բաժնուեցան:

Չարենց կ'ուրախանար Մահարիի յաջողած տողերով, կու տար օգտակար խորհուրդներ: «Ես անոր տուի մի տետր,- կը գրէ Մահարի,- անհամբեր ու ջղային կարդաց, շուռ տուաւ, նորէն կարդաց, անցաւ, կրկնեց և մատը մէկու մը վրայ դրաւ.

- Ա՛յ, այս մէկը լաւ է:

Արտասանեց առաջին տունը.

Փռել եմ քո կապոյտ նազանքների մութում,

Ինչ-որ իզուր ու զուր ցրել եմ ու թողել,

Հիմ գիւղերի ճամբին, ճամբաների փոշում»⁶:

1928-էն Մահարի արդէն ընդգծուած ինքնուրոյնութիւն ունեցող բանաստեղծ մըն էր, սեփական ըսելիքով և գեղագիտական սկզբունքով և կը սպասուէին «Հնձի հարուստ մրգաստաններ»:

1932-ին լոյս կը տեսնէ «Մրգահաս» ժողովածուն, որուն կցուած «Երկու խօսք»-ին մէջ բանաստեղծը կը գրէ. «Ինչ խօսք, որ այս գրքի, մասնաւորապէս բանաստեղծութիւններու բաժնին մէջ, կան բազմաթիւ գրուածքներ, որոնք ոչ մէկ կապ ունին իմ այսօրուան գրական որոնումներու հետ»:

Եւ, իրօք, հասունցած էր Մահարիի գրիչը և փոխուած անոր բանաստեղծական որոնումներու որակն ու բնոյթը: Չարենցի հոգատար վերաբերմունքով Մահարի գտած էր սեփական երգի ակունքը, մնայուն երկեր ստեղծելու գաղտնիքը, որով և աչքի կը զարնէ ինքնահաստատումի այս ժողովածուն:

«Մրգահասը» ձօնուած է Եղիշէ Չարենցի,

Առ ամառնային այս ոսկէ սիւնին,

⁴ «Գրական թերթ», 1933 թ., № 3:

⁵ Նոյն տեղը:

⁶ Նոյն ընդը:

Ու թող աշունը փառայեղ լինի...

Մահարիի ստեղծագործական աճին աշալրջօրէն հետեւող Եղիշէ Չարենց «Մըր-գահաս» ժողովածուն համարեց նշանակալից երեւոյթ, «սովետահայ լիրիկայի առաջին բանբերը, առաջին սուրհանդակը»:

«Մըրգահաս»-ի իրեն նուիրուած օրինակին վրայ⁷ Չարենց կը գրէ. «Մակագրութիւն մի գրքի վրայ» բանաստեղծութիւնը.

Երգերդ աղբիւր են զուլալ
Մեր երկրի սրտից բխած,
Դու մեր երկրի պէս շռայլ
Մեր երկրի պէս հորդառապ ու բաց:
Կարդալով քո գիրքը անհուն
Հաւաքում եմ գալիքին մեր վեհ:-
Օ՛, որքան է սիրտը վեհանում,
Որ նման երգեր է տուել:
Պայծառ է մեր երկրի գալիքը,
Օ՛, բերրի հերկերի գուսան:
Թող յաւէտ ապրի այս ծաղիկը
Մեր դաշտերում բուսած...

Անշուշտ սխալ է կարծել թէ Չարենց իր այս ընծայականով կ'անտեսէր «Մըր-գահաս»-էն առաջ եղած բանաստեղծութիւնները: Չարենցի գնահատականը գուցէ ոգեւորութեան անմիջական հետեւանք է, սակայն այդ ոգեւորութիւնը ունէր իրական հիմքեր: Յայտնի է, որքան ալ այսօր զարմանալի թուի, բնութիւն, սէր երգելը այդ տարիներուն կը պահանջէր մեծ համարձակութիւն:

«Մըրգահաս» ժողովածուն պարզորոշ կերպով կ'ընդգծէ Մահարիի գրական անցած ճանապարհը, կը հաստատէ ներքին հակասութիւններէ անցած բանաստեղծի անհատականութիւնն ու գրական վարպետութիւնը: Ինչպէս կը նշէ Գր. Շահինեան, եթէ հզօր անհատականութիւն ունեցող բանաստեղծներ իրենց անմիջական նախորդները ժխտելով կը բանան նոր դպրոց, ուրիշ կարգի բանաստեղծներ կը շարունակեն նախորդ սերունդի սկսածը և կը կատարելագործեն զայն, ապա Մահարի իր սեփական ուղին կը հարթէ՝ իւրացնելով նախորդներունը:

«Մըրգահաս»-ի ընդհանուր մթնոլորտի իշխող տարրերն են անկեղծութիւնը, մարդու, բնութեան, հայրենիքի և աշխատանքի նկատմամբ լեցուած խանդավառ սէրը, կորսուած մանկութեան կարօտն ու ծննդավայրը վերագտնելու երազը: Այդ խորհրդաւոր ու համակող մթնոլորտին մէջ, ինչպէս իրաւացիօրէն կը նկատէ Գր. Շահինեան, իրար կը հիւսուին թախիծն ու ուրախութիւնը, ամսոսանքի տխրութիւնն ու խանդավառ ցնծութիւնը: Իրար կը ձուլուին հասարակական ու անձնական ապրումները և կը կազմեն մահարիական ինքնատիպ աշխարհ, Մահարիական ոճ՝ համ ու հոտով, Մահարիական ապրումի բերք ու բարիք: Այգին ու հնձանը, փշատենին ու բարտին կը դառնան շնչող, շօշափելիօրէն կենդանի կերպարներ:

Մահարիի բանաստեղծութեան այգին չափազանց օգտակար պարտէզ եղած է Վահագն Դաւթեանի ու Հրաչեայ Յովհաննիսեանի, Սիլվա Կապուտիկեանի ու Գէորգ

⁷ Երեւանի պետական համալսարանի գրադարան:

էմինի համար: Անոր բարտիներուն սօսափին տակ, անոր հնձաններու անուշաբոյր գինիով շատեր ոգեւորուած են: Բանաստեղծութեան աշխարհին մէջ Մահարիի յայտնագործած տրամագրութիւններու կենսունակութեան և գեղարուեստական հմայքի լաւագոյն վկայութիւնն է այս հանգամանքը, որ անոր ազդեցութեան շրջանակները 30-ական թուականներէն հասան մինչեւ մեր օրերը:

Տարիներու հետ հասունցաւ և առնականացաւ Մահարիի գրիչը: 30-ական թուականները կը խոստանային անհատական «բերք ու բարիք», «պոետական հունձքի մրգաշատ աշուն», սակայն... սակայն «...ինչքան ծաղիկ պիտի բուսնէր, որ չբուսաւ էս հողին...»:

Անհեթեթ կուրուսեամբ Մահարին մեքենայականօրէն փրցուցին գրական մթնոլորտէն, սակայն ան հեռուէն կը հետեւէր հարազատ գրականութեան զարգացման ընթացքին: Եւ չնայած ակամայ ընդմիջումին, անոր մէջ երբեք չմեռաւ ստեղծագործելու կիրքը, մնաց անդաւաճան տանջանքով նուաճած ստեղծագործական ամբողջ համոզմունքներուն:

Մահարի միշտ կը ջանար անհատական ապրումներու միջոցաւ հասարակական հնչեղութեան հասցնել իր տողն ու պատկերը, բանաստեղծութիւնն ու պալլատը, ու եթէ ունեցած է վրիպումներ ու ստեղծագործական հակասութիւններ, այսուամենայնիւ, միշտ բարձր պահած է իր կոշումը, մաքուր քաղաքացիական խիղճը՝ մնալով ազնիւ ու անկեղծ, միշտ ուղիղ ու պարզ:

Անոր բանաստեղծական տաք շունչն ու ջերմացնող մթնոլորտը փոխանցուեցաւ արձակ երկերուն, որուն բազմաթիւ էջերուն մէջ Մահարի մնաց նոյն քնարական հարուստ ներաշխարհ ունեցող բանաստեղծը:

20-ական թուականներուն, պարբերական մամուլի և հանդէսներու մէջ բանաստեղծութիւններուն զուգահեռ սկսան հրապարակել անոր պատմութեանը, որոնք իրենց ընդհանուր նկարագրով կ'ազդարարէին, որ բանաստեղծութեան ասպարէզին մէջ իր ինքնուրոյնութիւնը հաստատած Մահարիի մօտ կը կենայ՝ արձակագիր Մահարին:

Արձակի մէջ Մահարի շունչեցաւ ինքնահաստատումի այն «ներքին տառապանքը», որ ան կրեց բանաստեղծական անհատականութիւնը հաստատելու ճամբուն վրայ: Ժիշդ է, որ Մահարիի մուտքը գրականութեան մէջ նշուեցաւ բանաստեղծութեամբ, բայց ան հաստատեց ինքզինք և գրական կայուն արժէքներու տէր դարձաւ իբրեւ արձակագիր⁸:

Անոր արձակին յատուկ են լուսաւոր ժպիտն ու թախիծը, հումորն ու զուարթ ծիծաղը իրար շաղկապուած, իրարմով պայմանաւորուած: Զպակսող եռանդով ան ստեղծեց արձակ գործեր, որոնք ո՛չ միայն անոր գրական ժառանգին, այլեւ հայ գրականութեան լաւագոյն էջերէն են:

Արձակի մէջ ալ Մահարի մնաց իբրեւ բնութեան ու սիրոյ, հայրենի կարօտի, իր ժողովուրդի ընկերային ու ազգային վերածնունդի երգիչ:

1936-ի Օգոստոս 9-ի գիշերը ողբերգական էր: Այդ գիշեր Ստալինի կամակատարները ձերբակալած էին արեւելահայ մտաւորականութեան մեծ մասը, Բակունց, Ալազան, Թոթովենց, Նորենց, Սուրխաթեան, Մակինցեան, Մահարի. Զարենցը վերապահած էին «յետոյի» համար, և յետոն շուշաջաւ: Նոյեմբերին զինք դաժան հարցաքննութեան ենթարկեցին: Փորձեցին թունաւորել հոգին, իբր թէ Բակունցը, Մահարին և ուրիշներ իր դէմ ցուցմունքներ տուած էին:

Զարենց կը բղաւէր, թէ կը զրպարտէք, անոնք իմ ընկերներն են և ընդունակ չեն դաւաճանութեան: Հարցաքննութիւնը կազմեց 16 էջ:

⁸ Հախվերդեան Լ., Մահարու գրիչը, «Առկտական գրականութիւն», 1953 թ., № 10:

Երբ տակաւին ողջ էր Հայաստանի Կենտրոնի առաջին քարտուղար՝ Աղասի Խանճեան, կը յաջողէր իր հովանիին տակ պատսպարել հայ մտաւորականները, իսկ երբ զինք սպաննեցին, Բերայի նշանակած Ամատունի Վարդապետեան սկսաւ ամենուն գլուխները հերթով ուտել:

Մահարի 1936-ին աքսորուեցաւ Սիպերիա՝ 10 տարիով: Պիտի ազատուէր 1946-ին, բայց մեքենագրուհին սխալմամբ աքսորի տարեթիւը տպած էր՝ 1947, ու Մահարի Սիպերիոյ մէջ մնաց մէկ տարի աւելի. սխալը սրբագրել չաջողուեցաւ: Ան Սիպերիայէն վերադարձաւ 1947-ի Օգոստոս 10-ին: Քայքայուած էր անոր ընտանիքը, 1944-ին մեռած էր մայրը, և կինը ամուսնացած էր:

Հեղինակի օրերը նորէն կը լեցուին տագնապներով: Ճիշդ այդ տագնապաշատ օրերուն Մահարի կը թարգմանէ է. Կազակեիշի՝ «Աստղը» վիպակը, կը գրէ «Կարմիր կակաշներ» վերնագրով երկը և քանի մը բանաստեղծութիւններ:

1948-ի Նոյեմբերին, Մահարի դարձեալ կը մեկուսացուի գրական կեանքէն⁹: Կուռայ գիւղին մէջ կը ծանօթանայ Վիլնիւսի համալսարանի իրաւաբանական բաժնի երրորդ կուրսի նախկին ուսանողուհի Անտոնինա Պալիլայտիտէի հետ: Վերջինս կը դառնայ Մահարիի կեանքի անդաւաճան ընկերը: «...Մեզ միացրին դժուար օրերը, զրկանքն ու տառապանքը...»¹⁰:

1954 թուականին Մահարի կը վերադառնայ Երեւան: Այս վերադարձը արդէն վերջնական էր:

Նոյն թուականին Մահարի կը վերահրատարակէ նախորդ շրջանին գրած չափածոյ գործերը և կը շարունակէ թուղթին յանձնել հեռուներէն ստացած տպաւորութիւնները: Վերադարձի խանդավառութիւնը մեծ էր, տրամադրութիւնը համակող: Անոր գրական բերքը այնքան առատ է և այլազան՝ որ մարդ կը տարուի մտածելու թէ աքսորի երկար տարիները պարզ փակագիծ մը եղած են միայն իր կեանքին մէջ, չեն ազդած ստեղծագործական իր թափին ու աւելին վրայ: Կարծէք Մահարի կրկին ձեռք առած էր գրիչը և շարունակած գործը ճիշդ հոնկէ՝ ուր կանգ առած էր դէպքերու բերումով:

«Այրուող այգեստաններ» վէպը կ'ընդգրկէ Առաջին համաշխարհային պատերազմին անմիջապէս նախորդող տարիները և իր մէջ կը ներառէ Վանի հերոսական ինքնապաշտպանութիւնն ու գաղթը:

Արձակագիրը հնարաւորութիւն կը ստանայ արժեւորելու մեր ժողովուրդի ազնիւ ընդվզումը, բացայայտելու արեւմտահայութեան, մասնաւորապէս Վասպուրականի ապրած աննախադէպ ողբերգութեան պատճառները:

Ի դէպ, հեղինակը ինք կը յուշէ իր վէպի յետագայ գնահատումի չափանիշները՝ ընթերցողին դարձնել «վանեցի». այնպէս, որ ան ո՛չ միայն Վանը տեսնէ, այլեւ կը զգայ, Օհաննէս աղայ Մուրադխանեանի կերպարի մարմնաւորումը և պատմական դէմքերու ու դէպքերու ճշմարիտ գնահատումը:

Մանկութեան օրրանի նկատմամբ դրսեւորած Մահարիական կարօտը վարար ու մոլեգին ընթացքի մէջ կ'առնէ ընթերցողը և իրօք, զինք կը դարձնէ «վանեցի»: Բազմերանգ ու կախարդող գոյներով գրողը կը վերստեղծէ հայրենի երկրի չքնաղ պոետիկան: Վերստեղծումի պատրանքը ներծծուած է թրթռացող սիրով ու թախիծով: Ծխացող կարօտի յաւիտենական յուշարձաններ են Մահարիի նկարագրած Վանի առաւօտներն ու մայրամուտները, օրուայ տարբեր ժամերուն տարբեր նրբերանգներով ծփացող այգեստանները:

Վանի մասին պատմող այս ամենահրաշալի ստեղծագործութիւնը, որ կարծէք երաժշտութիւն ըլլար, շուտով սուր քննադատութեան կ'արժանանայ, ուղղակի կը

⁹ Մահարի Գ. Երկերի ժողովածու, հ. 1, 1966:

¹⁰ Նոյն տեղը:

ոչնչացուի: Մահարի կ'ըսէ. «Վանի հերոսամարտով կը հպարտանանք, բայց ո՞ր է հիմա Վանը, որտեղ են վանեցիները: Եթէ հերոսամարտ էր, ինչո՞ւ կորանցուցինք Վանը»: Ան իրատեսօրէն կը վերլուծէ պատմական փաստերն ու քաղաքական խաղերը: Բայց այդ ժամանակ՝ 1965-66-ին, Հայաստանի մէջ հայրենասիրական նոր ալիք կը բարձրանար, ժողովուրդին ազգային գիտակցութիւնները զարթոնք կ'ապրէր: Ու կը սկսին Մահարին ահաբեկել, ստորացնել. «Այրուող այգեստաններն» այրեցին անոր պատուհինն տակ: Մահարի հեռացաւ երկրէն, գնաց կնոջ՝ Անտոնինայի հայրենիք: Կային գրողներ, որոնք մինչեւ վերջ Մահարիի կողքին կեցան ու պաշտպանեցին զինք՝ Վահագն Դաւթեան, Հրանդ Մաթեոսեան:

«Այրուող այգեստաններ»-էն յետոյ Գուրգէն Մահարի կը գրէ «Ծաղկած փշալարերը» վիպակը, որը Սիպերիական գործերէն է: Աշխատանքն սկսած էր 1965-ին: Վիպակը գրած է շատ կարճ ժամանակահատուածի մէջ՝ մէկ ամառուայ ընթացքին: Եւ խօսելով վիպակի մասին, ինք՝ Մահարի կ'ըսէ. «...վիպակս վերջացուցի: Պատմութեան ծրագիր ունէի, վիպակ դուրս եկաւ: Վէպ չէ՛, վիպակ»¹¹, իսկ Ա. Մելիք-Սարգսեանին ուղղուած նամակին մէջ այս վիպակին մասին կ'ըսէ. «Գրուած է «Սեւ մարդու» մոթիվներով, երեք անգամ աւելի ծաւալուն և տասներեք անգամ աւելի ցնցող ու խոր»¹²:

Վիպակի գլխաւոր հերոսը նոյն ինքն է, իսկ միւսները՝ իր ապրած կեանքի ուղեկից հերոսները: Վիպակին մէջ էջ առ էջ կը գծագրուի պայքարող մարդու կերպարը, որ կարծէք չի կրնար մնալ փշալարերէն ներս. ան կը յաջողի ստեղծել իր աշխարհը, որ հեռու է Սիպերիական ճամբարէն. «Ես գետափ կը նստէի տասէն-տասնհինգ վայրկեան և կ'օրհնէի աշխարհի ստեղծումն ու ծնունդը: Մոռցած բոլոր դառնութիւններն ու իմ թշուառ վիճակը, ես կը վերանայի հոգիով, կը սաւառնէի գործարար բակէն հեռու, և զինուած պահակներու մտքի ծայրէն անգամ չէր կրնար անցնիլ, որ ես ողջ էութեամբս դուրս կը գտնուիմ... անսահման դուրս անոնց հսկիչ կէտերէն» (էջ 20):

Կեանքի վերջին տարիներուն, ամրան ամիսները, Գուրգէն Մահարի կ'անցնէր Լիթուանիոյ ծովափնեայ Պալանկա ամառանոցին մէջ:

1969-ի ամառը վերջինն էր:

Յուլիս 16-ին Պալանկայի մէջ վախճանեցաւ տաղանդաւոր գրողը՝ կիսատ թողլով «Երիտասարդութիւն», «Քաջ Նազար» վէպերը և բազմաթիւ յղացումներ:

Անոր թողած գրական ժառանգութիւնը իրաւունք կը վերապահէ ըսելու, որ Մահարի հայ գեղարուեստական մտքի, անոր մշակոյթի այն վաստակեալ ներկայացուցիչներէն է, որու կեանքը կը նմանի և կը նոյնանայ իր իսկ ստեղծած գրականութեան:

Բանաստեղծութեան մէջ թէ պատմութեան, յուշի ձեւով թէ վիպակի, Մահարի մարդու երգն է որ երգած է միշտ, երբեմն իր սեփական ապրումներուն մէջէն, երբեմն արուեստի հրաշքով սեւեռուած տիպարներու ապրումին: Ան միշտ իւրայայտուկ էր, անձնական անկապտելի շեշտի տէր, անփոխարինելի ոճի վարպետ: Վաւերական գրող մը, որուն համար ապրիլը ստեղծել էր և ստեղծելը՝ խռովք ու վայելք:

¹¹ Մահարի Գ. Սիպիրական, Երևան, 2009, էջ 743:

¹² Նոյն տեղը:

Ն. ԱՐԴ. ԱԼՈՅԵԱՆ

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻԻ ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ**(Ծննդեան 115-ամեակ)****Ամփոփում**

Գուրգէն Մահարիի ծննդեան 115-ամեայ յոբելեանին առթիւ, գրական այս ակնարկով անդրադարձած ենք անոր տխուր կեանքին, աքսորի տարիներուն և գրական ժառանգութեանը: Մեր պատմութեան ամենէն բախտորոշ շրջաններէն մէկուն համապատասխանող իր կեանքի ընթացքին՝ գրողի ճակատագիրը յաճախ նոյնացած է ամբողջ իր ժողովուրդի ճակատագիրին հետ. ճանչցած է ան գաղթի և սովի սարսափը, որբանոցային կեանքի գորշութիւնը, բաժնեկից եղած է հանրապետութեան և խորհրդայնացումի տարիներու յոյզին, ճաշակած մեր ժողովուրդին վերապահուած ուրախութիւններն ու դառնութիւնները: Այս ակնարկով փորձած ենք անդրադառնալ այդ բոլոր արձագանքներուն, որ կը գտնուին Մահարիի բազմասեռ, այլազան և միշտ իւրայատուկ գրական ստեղծագործութեանց մէջ:

FR. N. ALOYAN

ON THE UNFADING MEMORY OF GURGEN MAHARI**(115th Anniversary)****Summary**

This essay discusses Gurgeneh Mahari's sorrowful life, years of exile and literary heritage on the occasion of his 115th anniversary. The writer's destiny was often equated with the destiny of his people as he lived during one of the most significant periods of our history. He got to know the horrors of exile and famine, the bitterness of life in an orphanage, he experienced the excitement of state-building and Sovietization, and shared the happiness and misery of our people. This essay is an attempt to refer to all of the mentioned events which found their reflection in Mahari's diverse, varied and always unique literary works.

